ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *10 ՀՈՒՆԻՍԻ 2020թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Վոլոդյա Ավետիսյանը, Վիգեն Գրիգորյանը, Մելսիկ Զաքարյանը, Ռոմիկ Ներսիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սնակ Միքայելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի.

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի N 06 հերթական նիստի օրակարգը.

1. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 190-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին
3. Փոխադրամիջոցների գույքահարկի գումարը վերադարձնելու մասին
4. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
5. Թաթուլ Սահակյանին վարձակալության իրավունքով տրամադրված բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին
6. Սամվել Հակոբյանին վարձակալության իրավունքով տրամադրված բնակավայրերի նպատակային նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին

7. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0.09 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին

8. Կադաստրային քարտեզում հայտնաբերված անճշտության ուղղում կատարելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին
9. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
10. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
11. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
12. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի, գյուղատնտեսական և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
13. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 192 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 190-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հրազդան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 190-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝
1.Եկամտային մասում՝
«Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/» տողի «13302.3» թիվը փոխարինել «15402.3»թվով:
2.Ծախսային մասում՝
1) 4 բաժնի 2 խմբի 1 դասի 55 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «0» թիվը փոխարինել «250.0» թվով:
2) 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում«0» թիվը փոխարինել «500.0» թվով:
3) 4 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի, սուբվենցիայի ծրագրով«Նախագծահետազոտական ծախսեր» /5134/ հոդվածում «4800.0» թիվը փոխարինել «3800.0» թվով:
4) 5 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «2250.0» թիվը փոխարինել «3250.0» թվով, «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» /4267/ հոդվածում«0» թիվը փոխարինել «400.0» թվով:
5) 6 բաժնի 6 խմբի 1 դասի 51 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «2200.0» թիվը փոխարինել «4600.0» թվով:
6) 8 բաժնի 1 խմբի 1 դասի 52 ծրագրի «Այլ մեքենաներ և սարքավորումներ» /5129/

հոդվածում«0» թիվը փոխարինել «1000.0» թվով:
7) 11 բաժնի 1 խմբի 2 դասի 51 ծրագրի «Պահուստային միջոցներ» /4891/ հոդվածում «63069.565» թիվը փոխարինել «60619.565» թվով:
Ընդամենը բյուջեի փոփոխությունը կազմում է 2100.0 հազար դրամ:
Բյուջեի թիվը և' եկամտային, և' ծախսային մասում կազմում է 1763880.805 հազար դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ն/

Լսեցին
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 48-րդհոդվածով.

1. Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 220 տան բնակչուհի Քնարիկ Եփրեմյանի ոտքը կոտրվել է, անհրաժեշտություն է առաջացել կատարել վիրահատություն: Վիրահատության ծախսերը փոխհատուցելու համար հատկացնել 100000/մեկ հարյուր հազար/ դրամ գումար Քնարիկ Ղազարյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72/

Լսեցին
ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով և Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 38 շենքի 116 բնակարանի բնակիչ Գարիկ Խաչատրյանի 2020 թվականի հուլիսի 2-ի N Կ-472 դիմումը.

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001215 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից հետ վերադարձնել վաճառքից հետո առաջացած գերավճարի չափով Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 38 շենքի 116 բնակարանի բնակիչ Գարիկ Խաչատրյանին 4281 /չորս հազար երկու հարյուր ութսունմեկ/ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Մանվել Դիլաքյանին 2004 թվականի դեկտեմբերի 01-ին տրված թիվ 1208832 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը և Մանվել Դիլաքյանի լիազոր անձ Սարգիս Վերդոյանի 2020 թվականի հունիսի 2-ի դիմումը.

1. Թույլատրել ուղղակի վաճառքով օտարել Հարավային թաղամասի Հացագործների փողոց 2/7 հասցեում գտնվող 28.44քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Մանվել Դիլաքյանին՝ 54500 /հիսունչորս հազար հինգ հարյուր/ դրամ կադաստրային արժեքով /կադաստրային համարը՝ 07.001.0683.0006/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74/

Լսեցին
ԹԱԹՈՒԼ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Թաթուլ Սահակյանին 2016 թվականի ապրիլի 12-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 12042016-07-0036 վկայականը /գաղտնաբառ՝ 6T5U9S2HAGQW/ և Թաթուլ Սահակյանի 2020 թվականի մայիսի 13-ի դիմումը.

1.Թույլատրել ուղղակի վաճառքով օտարել Կենտրոն թաղամաս 36/6 հասցեում գտնվող 53.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 36 շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ Թաթուլ Սահակյանին՝ 156000 /մեկ հարյուր հիսունվեց հազար / դրամ կադաստրային արժեքով / կադաստրային ծածկագիր՝ 07-001-0452-0063/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75/

Լսեցին
ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Սամվել Հակոբյանին 2005 թվականի մարտի 29-ին տրված թիվ 1794110 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը և Սամվել Հակոբյանի 2020 թվականի մայիսի 27-ի դիմումը.

1.Թույլատրել ուղղակի վաճառքով օտարել Միկրոշրջան թաղամաս 77/17 հասցեում գտնվող 28.01 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 77 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Սամվել Հակոբյանին՝ 35000 / երեսունհինգ հազար / դրամ կադաստրային արժեքով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.09 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, « Քաղաքաշինության մասին » օրենքի 14.3 հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման, հիմք ընդունելով Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ Հրազդան համայնքի գլխավոր հատակագծում փոփոխության վերաբերյալ 2018 թվականի ապրիլի 10-ի N 44 դրական եզրակացությունը.

1.Հրազդան քաղաքի վարչական սահմաններում գտնվող՝ Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 20/4 հասցեում համայնքային սեփականություն համարվող 0702-0001 կադաստրային ծածկագրով 0.09 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը անտառայինից փոփոխել բնակավայրերի հողերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77/

Լսեցին
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի.

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 1831-Ն որոշմամբ՝ քարտեզագրման անճշտության հետևանքով, որպես քաղաքացիների սեփականություն փոխանցված
1)Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Սպանդարյան փողոց 18/1 հասցեում գտնվող 435.2 քմ մակերեսով (ծածկագիր՝0623-0061)
2)Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 2/1 հասցեում գտնվող 150.0 քմ մակերեսով (ծածկագիր՝0326-0042)
3)Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 372/4 հասցեում գտնվող 178.9 քմ մակերեսով (ծածկագիր՝0325-0012)
4)Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Երևանյան փողոց 46 հասցեում գտնվող 260.5 քմ մակերեսով (ծածկագիր՝0683-0058) հողամասերը ճանաչել Հրազդան համայնքի սեփականություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2 կետի «ա» ենթակետի պահանջների.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված բնակավայրերի նպատակային նշանակության հետևյալ հողամասերը.
1)Կենտրոն թաղամաս 88/8 հողամասը՝ 20.0 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով:
2)Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 121 հողամասը՝ 19.95 քմ (ավտոտնակ կառուցելու)՝ 5000 (հինգ հազար) դրամ տարեկան վարձավճարով՝ 99 (իննսունինը) տարի

ժամկետով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի, Հողային օրենսգրքի 481-րդ հոդվածի և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2 կետի.

1.Թույլատրել մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված հետևյալ հողամասերը.
1)Միկրոշրջան թաղամաս 301/10 հասցեում գտնվող 27.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 7000 (յոթ հազար) դրամ մեկնարկային վարձաչափով, մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000(երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել 1000 (երկու հազար) դրամ՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝0518-):
2)Կենտրոն թաղամաս 16/13 հասցեում գտնվող 27.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 7000 (յոթ հազար) դրամ մեկնարկային վարձաչափով, մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ, մեկ քայլի չափը սահմանել 1000 (մեկ հազար) դրամ՝ 99 (իննսունինը) տարի ժամկետով (կադաստրային ծածկագիր՝07-001-0442-0124):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Թույլատրել մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Ջրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը (կադաստրային ծածկագիր 07-001-3859-0001) ՝ 14.89049 հա մակերեսով չորրորդ կարգի, 100000 (մեկ հարյուր հազար) դրամ մեկնարկային վարձաչափով, 5 (հինգ) տարի ժամկետով:
2.Մրցույթի մասնակցության մուտքի վճարը սահմանել 2000 (երկու հազար) դրամ:
3.Մրցույթի մեկ քայլի չափը սահմանել 2000 (երկու հազար) դրամ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների.

1.Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հետևյալ հողամասերը
.
1)Կենտրոն թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 11/6 հասցեում գտնվող 1511.9 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ՝ 5000000 (հինգ միլիոն) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր ՝ 07-001-0452-0236):
2)Մ. Բաղրամյան թաղամաս,5-րդ փողոց 36/1 հասցեում գտնվող 47.9 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը ՝ 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր ՝ 07-001-0510-0158):
3) Մ. Բաղրամյան թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 100/1 հասցեում գտնվող 185.7 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ՝ 1910000 (մեկ միլիոն ինը հարյուր տասը հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր ՝ 07-001-0509-0282):
4) Մ. Բաղրամյան թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 100/2 հասցեում գտնվող 379.2 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը ՝ 3500000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր ՝ 07-001-0509-0280):
5) Մ. Բաղրամյան թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 102/2 հասցեում գտնվող 76.1 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը ՝ 615000 (վեց հարյուր տասնհինգ հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր ՝ 07-001-0509-0279):
6) Մ. Բաղրամյան թաղամաս, 5-րդ փողոց 18/3 հասցեում գտնվող 72.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը ՝ 400000 (չորս հարյուր հազար)

դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0509-0281):
7)Միկրոշրջան թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա 107/4 հասցեում գտնվող 64.2 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 700000 (յոթ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0146-0248):
8) Միկրոշրջան թաղամաս, 3-րդ փողոց 233/4 հասցեում գտնվող 212.4 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 800000 (ութ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0514-0025):
9) Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 15/3 հասցեում գտնվող 32.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0113):
10)Կենտրոն թաղամաս, Զորավար Անդրանիկի պողոտա 4/1 հասցեում գտնվող 528.9 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 3500000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0463-0033):
11)Հարավային թաղամաս, Երևանյան խճուղի 113/5 հասցեում գտնվող 100.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0265-0008):
12)Կենտրոն թաղամաս Օգոստոսի 23-ի փողոց 8/1 հասցեում գտնվող 119.7 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 620000 (վեց հարյուր քսան հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0457-0084):
13)Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 13/11 հասցեում գտնվող 45.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0110):
14) Միկրոշրջան թաղամաս, 8-րդ փողոց 22/1 հասցեում գտնվող 54.8 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0505-0192):
15) Հարավային թաղամաս, Երևան-Սևան մայրուղի 28/7 հասցեում գտնվող 1000.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 1600000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0037-0025):
16) Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 15/4 հասցեում գտնվող 32.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0513-0112):
17)Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 42/1 հասցեում գտնվող 56.25 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 280000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0458-0118):
18)Կենտրոն թաղամաս 41/1 հասցեում գտնվող 26.6 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0454-0117):
19) Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 63/1 հասցեում գտնվող 60.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 360000 (երեք հարյուր վաթսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0444-0060):
20) Կենտրոն թաղամաս, Օգոստոսի 23-ի փողոց 16/2 հասցեում գտնվող 72.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 300000 (երեք հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0454-0116):
21)Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց 2/1 հասցեում գտնվող 156.0 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը՝ 600000 (վեց հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001- 0529-0030):

22)Ջրառատ թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց 58/2 հասցեում գտնվող 60.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0169-0014):
23)Հարավային թաղամաս, Սպանդարյան փողոց 82/1 հասցեում գտնվող 68.2 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0612-0048):
24)Ջրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքից 1.03507 հա մակերեսով հողամասը՝ 2000000 (երկու միլիոն) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0926-0285):
25)Ջրառատ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, այլ հողատեսքից 0.24535 հա մակերեսով (վարելահող՝0.23136 հա, այլ հողատեսք՝0.01399 հա) հողամասը՝ 350000 (երեք հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0878-0020):
26)Հարավային թաղամաս, Չարենցի փողոց 61/1 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերից 480.0 քմ մակերեսով հողամասը՝ 650000 (վեց հարյուր հիսուն հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-0609-0022):
27)Ջրառատ թաղամաս, Հրազդան-Զովաբեր-Դղմաշեն ճանապարհ 1/3 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերից 1000.0 քմ մակերեսով հողամասը՝ 1600000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) դրամ մեկնարկային գնով (կադաստրային ծածկագիր՝ 07-001-3453-0004):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Չեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 192 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԲԱԲԱՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հրազդան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին» N 192 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«1. Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 55 շենքի 66,71 քառակուսի մետր մակերեսով N36 բնակարանը անհատույց օտարել գույքը տիրապետող (բնակելի տարածության օրդեր՝ N14541, տրված 01.03.1990թ., սեփականության վկայական՝ N03122019-07-0117) Տաթևիկ Առաքելի Տոնիկյանին (ծնված՝ 09.04.1986թ, անձնագիր՝AR0608477, տրված՝ 10.01.2018թ.,036-ի կողմից):»,

2) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
«2. Համասեփականատեր ճանաչել Տաթևիկ Առաքելի Տոնիկյանի դուստր Արմինե Էդգարի Դալլաքյանին (ծնված՝ 14.07.2003թ., անձնագիր՝ AT0282983, տրված՝ 21.08.2019թ., 036-ի կողմից:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83/

Ավագանու անդամներ՝

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը